

Սեդրակ Ասատրյանը 2003 թվականից «Կոնցեռն-Դիալոգ» փաստաբանական գրասենյակի տնօրենն է: Մասնագիտացած է սեփականության/ անշարժ գույք/, վարչական , աշխատանքային և ժառանգության իրավունքների ոլորտում: Իրավախորհրդատվական ծառայություն է մատուցում նաև կորպորատիվ և մրցակցային իրավունքներին առնչվող հարցերի վերաբերյալ:

Փորձառու փաստաբանն իր հաճախորդների շահերը դատական տարբեր ատյաններում, ինչպես նաև վարչական մարմիններում բարձրորակ ներկայացուցչություն ապահովելու մեծ փորձ ունի: Սեդրակ Ասատրյանն իր վստահորդների շահերը ներկայացրել է, օրինակ, ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում, ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտեում: Մասնագիտանում է նաև տնտեսական հանցագործությունների ոլորտում իրավունքի պաշտպանության հարցերում:

2000-2009թթ. աշխատել է Երևանի Քաղաքապետարանին կից "Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների" կենտրոնում՝ որպես տնօրենի տեղակալ:

2004-2005թթ. եղել է Դիլիջանի քաղաքապետի խորհրդական:

2010 թ. հուլիսին մասնակցել է **USAID-ի** կազմակերպված դասընթացներին, ԱՄՆ Օհայո նահանգի Ցինցինատ քաղաքում:

2018-2019 թթ. ավարտել է ԱՄՆ դեսպանատան և INL-ի կողմից կազմակերպված "Հակակոռուպցիոն և մարդու իրավունքների զարգացման" դասախոսների վերապատրաստման դասընթացը:

Պարբերաբար մասնակցում է գիտագրթական համաժողովների, վերապատրաստվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում կազմակերպվող մասնագիտական դասընթացներում:

Բազմաթիվ հոդվածների, ինովացիոն առաջարկությունների հեղինակ է, ինչպես նաև «ՀՀ Նոր աշխատանքային օրենսգիրք, Աշխատանքային պայմանագրեր» (Գիրք 1) և «ՀՀ Նոր աշխատանքային օրենսգիրք, Գործատուի ներքին և անհատական իրավական ակտեր» (Գիրք 2) գրքերի համահեղինակն է:

Ավարտել է Երևանի «Գալիք» համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

Սեդրակ Ասատրյանը 2008թ-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի, 2010թ-ից Հայաստանի ԱՄՆ շրջանավարտների ասոցացիայի, իսկ 2017 թ-ից ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդի անդամ :